

## Ուրարտու՞ Արման Ռեազյան

Հեղինակավոր (և ոչ այնքան) պատմաբաններ և լեզվաբաններ կպնդեն, որ խոսել Արմանա (Արմենիա) անվամբ երկրի գոյության մասին, այն էլ հայերով բնակեցված, ավելի վաղ ժամանակաշրջանում քան մ.թ.ա VI դարը, անհեթեթություն է, և որ Արմենիա – Հայաստանի մասին կարելի է խոսել միայն և միայն որպես Ուրարտուի ժառանգորդի, որն, ինչպես հայտնի է, պատմական ասպարեզից վերացավ հենց մ.թ.ա VI դարում: Սրան, իհարկե, որպես ապացուցված փաստ, կմիացնեն այն հայտնի տեսակետը, թե ուրարտական լեզուն ոչ մի դեպքում հայերենը չէ, և որ Ուրարտուի հարցը մեկընդմիջտ լուծված ու փակված է:

Իրականում դա այդպես չէ. Ուրարտուի հարցը նոր զարգացումների առաջ է կանգնած, և դա պայմանավորված է շումերագիտության և եգիպտագիտության նոր կամ ավելի ճիշտ՝ վաղուց չնկատված տվյալներով: Պարզապես նկատելու համար հարկավոր է հետազոտել հայոց, հին եգիպտական և շումերական լեզուները մեկ ընդհանուր համատեքստում, որն է Նուիրական Եռալեզուն (sacreg trilingual):

Հասկանալի պատճառներով այստեղ մենք չենք բերի մեզանում ծնված հիպոթեզի ապացուցողական ամբողջ ծավալը, բայց այնուամենայնիվ Արմենիա – Հայք անվանումներին վերաբերող մեկ օրինակ կբերենք:

Բիայնի անվան մասին, որով իրենց պետությունն էին անվանում հենց իրենք՝ “ուրարտական” արքաները, Բ.Պիտորովսկին գրել է հետևյալը:


“Այնքան էլ պարզ չէ մեզ համար Բիայնի տերմինը: Ներկա պահին ընդունված է այս տերմինը օգտագործել չձևակերպված հոլովի –լի ածանցով [Բիայնիլի – Ա.Ռ] : Այս ածանցը այլ հոլովներում բացակայում է, այդ պատճառով, որպեսզի չստեղծվի տպավորություն, թե այն պատկանում է բառարմատին, հարմար է օգտագործել Բիայնի ձևը, պայմանավորվելով, որ այն հասկացվում է որպես հոգնակի հավաքական ձև” [«Ванское царство», Москва-1959., с.32].

Մենք այս հարցի մեջ մի փոքր պարզություն կներմուծենք՝ Բիայն բառը հ.եգիպտական է, որը հայ.Արման բառի ուղիղ թարգմանությունն է:



Արման [Հրաշք], Ջարմանալի  
Hieroglyphic Egyptian-French dictionary by Roger Lambert (1925)

Այժմ Եգիպտոսից տեղափոխվենք Շումեր և փորձենք պարզել ոչ ավել, ոչ պակաս Իմաստության և Գիտության Էնկի (Աշխարհակալ) Հայա Աստծո բնակավայրը: Համաձայն արդի շումերագիտության, Հայա Աստվածը բնակվում էր “(տիեզերական) ընդերքային ջրերում”, որի անվանումն է abzu. Նույն այս խոսքով էին նշանակում մեհյանների ջրամբարները:



sum.abzu, akk.apsû

«(cosmic) underground water; a ritual water container in a temple»

Եւ այժմ մեզ բավական է ուշադրություն դարձնել այն փաստին, որ աքքադացիք այս նույն խոսքը արտասանում էին **apsû** [ M. Sigrist, Drehem 141- 1992], և անմիջապես ամեն ինչն ընկնում է իր տեղը, որովհետև հայ. **apš**, **apšel** (< **apš-anel**) ”ապշել” –ը հայերենում **Արման** բառի հոմանիշն է, ժամանակակից հայերենում ներկայանալով որպես զարմանքի բարձրագույն դրսևորում - “սաստիկ զարմանալ” [Է.Բ.Աղայան. ԱՀԲԲ - 1976]: Այսպիսով՝ մենք նորից և նորից տեսնում ենք ակնհայտ ցուցանակ առ Հայոց Պար, առ Արմենիա երկիր, որպես բնակավայր Հայա Աստծո, որի անունն էլ հենց կրում ենք մենք՝ հայերս:

Ինչ վերաբերում է ջրերին, լինեն դրանք “(տիեզերական) ընդերքային ջրեր” թե “մեհյանների ջրամբարներ”, ապա Հայոց Պարը, որտեղից իրենց սկիզբն են առնում Տիգրիս և Եփրատ գետերը, Միջագետքում բնակվող ժողովուրդների պատկերացումներում պարտավոր էին ասոցացվել ջրամբարների հետ և պետք չէ մոռանալ, որ համաձայն շումերական էպոսի, հենց Հայա Աստվածն է, որ իր սերմից ստեղծել է Եփրատ և Տիգրիս գետերի ջրերը:

Այսպիսով՝ Արմանա անվանումը գոյություն է ունեցել Հայոց լեռնաշխարհում քաղաքակրթության ծագման առաջին իսկ օրվանից: Այն պատկանել և վերաբերվել է հենց նրանց, ովքեր իրենց հայ են անվանում: Իսկ “ուրարտական լեզուն”, որ իբր թե տարբեր է հայերենից, ցնորք է (թեկուզ և գիտական), որ հիմնված է մի մեծ սխալի վրա: Այդ սխալն այն է, որ “ուրարտագիտության” ակունքներում կանգնած գիտնականները այդպես էլ չկարողացան կռահել, որ Ասորեստանի և Հայքի գրավոր աղբյուրների նույն սեպագիր նշանների հնչյունային արժեքները պարտադիր չէ, որ համընկնեն.

Ճիշտ այնպես, ինչպես դրանք չեն համընկնում շումերների և սքադների մոտ:

Չկարողանալով գծել այս պարզ զուգահեռը և Հայքում գտնված սեպագրերը վերծանելով ասորիներից վերցված հնչյունային արժեքներով՝ նրանք այսպիսով ստեղծեցին մի ուրվական լեզու, այն դեպքում, երբ ինքնին Ուրարտու անվանումը գալիս է դեռ շումերերենից, որտեղ ներկա է որպես <sup>UR</sup>ARATTA “**Առատ Երկիր**”, չէ՞ որ Արմանա-Հայքը տիրապետելով Տիգրիս և Եփրատ գետերի ակունքներին՝ իրոք որ առատ էր և չէր կարող այդպիսին չկոչվել:

December 30, 2013